

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N° 7.

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԳԻՏԵՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

17 հունիսի 2022թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Բ.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի 15 անդամներից 14 անդամները և Ծ/ԻՏ ամբիոնի դոցենտ, տգթ., Ռ. Յուլյանը:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Ա.Զաքարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաղորդում ֆակուլտետում նոր կրթական ծրագրի հաստատման մասին:
2. Ուսանողական խորհրդի (ՈԻԽ) և ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) նախագահների հաշվետվություն:
3. Ֆակուլտետի դեկանի ամփոփիչ հաշվետվություն:

Առցանց քվեարկությամբ՝ 14 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 1/1

➤ Հաստատել նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին, «Հաղորդում ֆակուլտետում նոր կրթական ծրագրի հաստատման մասին», հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Ա. Հովակիմյանը: Ձեկուցողը ներկայացրեց, «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» (ԻԿՄ)

կրթական ծրագրի վերանայող խմբի գործունեության աշխատանքը: Հաշվետվությունը ներկայացվում է ՀԱՎԵԼՎԱԾ I

Արտահայտվեցին

Գ. Սարգսյանը, Մ. Զաքարյանը, Մ. Ճաղարյանը, Բ. Օթարյանը:

Առցանց քվեարկությամբ՝ 14 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 1/2

Ընդունելի գիտություն

Օրակարգի երկրորդ, «Ուսանողական խորհրդի (ՈԻԽ) և ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) նախագահների հաշվետվություն», հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկան ՈՒԳԸ նախագահ Ս. Զելոյանը, ՈՒԽ նախագահ Է. Կարապետյանը:

Լսեցին.

ՈՒԳԸ նախագահ Ս. Զելոյանի զեկույցը: Զեկուցողը ներկայացրեց.

Բնական գիտությունների ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախաձեռնությամբ ս.թ. մայիսի 16-ին տեղի էունեցել այց դեպի Երևանի «Ինժեներական քաղաք»: Այցին մասնակցում էին Բնագիտական ֆակուլտետի ուսանողներ և դասախոսներ: Ուսանողները ստացան նոր գիտելիքներ հայտնի հայ ֆիզիկոսների, ինժեներների, աստղագետների և տարբեր նշանավոր մարդկանց մասին:

Լսեցին.

ՈՒԽ նախագահ Է. Կարապետյանի զեկույցը: Զեկուցողը ներկայացրեց ՈՒԽի մեկ տարվա ընթացքում կատարած աշխատանքները:

Հաշվետվությունը ներկայացվում է ՀԱՎԵԼՎԱԾ II

Արտահայտվեցին

Գ. Սարգսյանը, Մ. Զաքարյանը, Մ. Ճաղարյանը, Ք. Օթարյանը:

Առցանց քվեարկությամբ՝ 14 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

ՈՐ ՈՇՈՒՄ 1/3

Բաց քվեարկությամբ՝ 14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ընդունել ի գիտություն:

Օրակարգի երրորդ՝ «Ֆակուլտետի ղեկանի ամփոփիչ հաշվետվություն» հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Մ. Զաքարյանը: Զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի մեկ տարվա գործունեությունը:

Հաշվետվությունը ներկայացվում է ՀԱՎԵԼՎԱԾ III

Արտահայտվեցին.

Ա. Հովակիմյանը, Գ. Սիմոնյանը, Գ. Սարգսյանը:

ՈՐ ՈՇՈՒՄ 1/4

Բաց քվեարկությամբ՝ 14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ընդունել ի գիտություն:

ՀԱՎԵԼՎԱԾ I

Հաշվետու ժամանակահատվածում ԻԿՄ կրթական ծրագրի վերանայող խմբի կողմից քննարկվել են նախորդ երեք տարիների ընթացքում ծրագրի վերանայման

արդյունքները, ընթացիկ ուստարում իրականացված մոնիթորինգի արդյունքները, մշակվել է ծրագրի վերանայման գործընթացի իրականացման միջոցառումների պլան: 2022թ. հունվարից կատարվել են 2022-2026թթ. համար ԻԿՄ կրթական ծրագրի մշակման աշխատանքներ:

Խմբի նիստերը հիմնականում անցկացվել են առցանց: Խմբի անդամների մասնակցությունը եղել է բավարար:

ԻԿՄ Կրթական ծրագրում փոփոխությունները կատարվել են հետևյալ ուղղություններով.

- Դասավանդման մոդուլային համակարգին անցնելու համար ձևավորվել են կրթական մոդուլներ, որոնք ներառում են
 1. մաթեմատիկական բլոկի դասընթացները,
 2. ծրագրավորման բլոկի դասընթացները,
 3. տեխնիկական բլոկի դասընթացները:
- Որոշվել է չորրորդ կիսամյակից իրականացնել ուսուցումը երեք մասնագիտական ուղղություններով
 1. ինֆորմատիկա և ծրագրավորում
 2. ռոբոտոտեխնիկա և մեխատրոնիկա
 3. թվային անվտանգություն:
- Որոշվել է նոր կրթական ծրագրում ավելացնել պրակտիկաների քանակը:

Նշված խնդիրների իրականացման և կրթական ծրագրի մասնագիտորեն ստանալու համար իրականացվել են հետևյալ գործընթացները.

 - ➔ Հաշվի առնելով նոր մասնագիտացումները վերանայվել և ձևակերպվել են կրթական ծրագրի վերջնարդյունքները:
 - ➔ Ճշգրտվել է հետազոտական բաղադրիչ պարունակող մոդուլների ցանկը:
 - ➔ Կրթական ծրագրում ներդրվել է շարժունության պատուհանը:
 - ➔ Վերանայվել են կրթական ծրագրի մոդուլների նկարագրիչները՝ համաձայն ուսումնական գործընթացի կազմակերպման նոր կարգի, այսինքն մոդուլների

նկարագրիչներում առանձնահատուկ վերանայվել են գնահատման չափանիշները և ձևերը:

- Դասախոսների կողմից նոր մոդուլների (և ձևավորված, և նոր մասնագիտացումների համար ներառված) համար մշակվել են նկարագրիչները:
- Վերանայման ընթացքում թարմացվել են մոդուլների (դասընթացների) բովանդակությունները՝ բացառելով համընկնումները այլ մոդուլների հետ, յուրաքանչյուր մոդուլի (դասընթացի) համար ճշգրտվել են դասավանդման և ուսումնառության մեթոդները, գործող կարգի հիման վրա մշակվել է ինքնուրույն և ընթացիկ աշխատանքների, ինչպես նաև վերջնական գնահատականի ձևավորման մարտավարությունը:
- Վերանայվել են մասնագիտական պրակտիկայի կազմակերպման և գնահատման կանոնները:
- Բոլոր մոդուլների նկարագրիչներն ուսումնասիրվել և քննարկվել են վերանայող խմբի կողմից:
- Կրթական ծրագրի մասնագիրը բերվել է վերջնական տեսքի, որը քննարկվել է բնական գիտությունների ֆակուլտետի «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» և «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնների 03.06.22թ. կայացած համատեղ նիստում և ներկայացվել է ֆակուլտետի գիտական խորհրդում հաստատման:
- Ինֆորմատիկա (համակարգչային գիտություններ) մասնագիտության «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» 2022-26թթ. կրթական ծրագիրը հաստատվել է բնական գիտությունների ֆակուլտետի 13.06.2022թ. տեղի ունեցած գիտական խորհրդի նիստում:

Կրթական ծրագրի ղեկավար՝

Հովակիմյան Ա.Ս.

2021 թ. սեպտեմբերի 25-ին տեղի է ունեցել ԲԳՖ ՈԻԽ նախագահի ընտրությունները, որին մասնակցել են 10 պատվիրակներ և Էլլա Կարապետյանը միաձայն այո-ով ընտրվել է նախագահ:

2021 թ. սեպտեմբերի 30-ին կազմակերպվել է ԲԳՖ ուսանողների հետ հանդիպում, որի ընթացքում ծանոթացել են միմյանց և հետագա կատարվելիք աշխատանքների հետ:

2021 թ. հոկտեմբերի 8-ին վերագործարկվել է բողոքների և առաջարկությունների արկղը:

2021 թ. հոկտեմբերի 18-ին կատարվել է ճանաչողական այց դեպի ԵՊՀ, ՀԱՊՀ, Բյուրական, որին մասնակցել են 20 ուսանող և 2 դասախոս: Այցը սկսվել է մայր բուհի ռադիոֆիզիկայի ֆակուլտետով, ուսանողները զրուցել են պարոն Ար. Մակարյանի, ապա պարոն Բաղդասարյանի (գերբարձր հաճախությունների լաբորատորիա), պարոն Հարությունյանի հետ (մագնիսական մշակումների լաբորատորիա): Այցը շարունակվել է պոլիտեխնիկական համալսարանի 10-րդ մասնաշենքում գտնվող ANEL (Armenian National Engineering Laboratory) կենտրոնում: Ծանոթացել են կրթական ինժեներ, գիտությունների թեքնաձու դոցենտ Ազատուհի Ուլիկյանի հետ, հենց նրա հետ էլ շրջել ու ծանոթացել են կենտրոնի հետ: Ծանոթացել են ինովացիոն տեխնոլոգիաների արտադրությանն ու կիրառությանը, այնտեղի մի քանի ուսանողների հետ և նրանց կատարած աշխատանքների հետ: Հաջորդիվ այցելել են Ա. Ա. Մելիքյանի անվան ՀԱՊՀ Ռոբոտատեխնիկայի ուսումնա-հետազոտական կենտրոն, որտեղ ծանոթացել են դրոնների արտադրությանը և կիրառությանը: Հագեցած օրն ավարտվել է Բյուրականի աստղադիտարանում, որտեղ այցելել են Վիկտոր Համբարձումյանի տուն-թանգարան:

2021 թ. հոկտեմբերի 31-ին, այց է կատարվել Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր, որտեղ տեղի է ունեցել DigiTec Expo ցուցահանդեսը, որտեղ ուսանողները ծանոթացել են ծրագրավորման և ռոբոտաշինության տարբեր ոլորտներին: Մասնակից ուսանողները եղել են 18 հոգի:

2021 թ. նոյեմբերի 27-ն կազմակերպվել է մոտիվացնող և ընկերական հանդիպում 3 դասախոսների հետ:

2022 թ. այց է կատարվել հայրաքաղաք Գյումրի, ուսանողները զբոսավարի հետ շրջել են Գյումրիի հետաքրքիր վայրերով, փողոցներով, լսել ամեն մի քար ու ծառի հետ կապված հիշարժան պատմությունները, իսկ վերջում այցելել տեխնոպարկ, շրջել ու ծանոթացել ամբողջ տեխնոպարկի հետ:

2022թ. ապրիլի 28-ին կազմակերպվել է Ռեկտորատը:

Որպես ընթացիկ ծրագրեր կազմակերպվել են կուրսերի ավագների, ուսանողների հետ հանդիպումներ, եղել են խնդիրներ կապված ուսանողների ու դասախոսների, ֆակուլտետների հետ կապված, որոնց շատ արագ դեկանի հետ համատեղ ուժերով լուծում է տրվել: Ուսանողներին և դասախոսներին բացատրվել է ուսխորհրդի դերն ու կարևորությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ III

Ըստ կրթական ծրագրերի՝ Բնական գիտությունների ֆակուլտետում ունենք հետևյալ պատկերը:

Ի/ԿՄ կրթական ծրագրի Առկա ուսուցման անվճար համակարգում

4. 2-րդ և 3-րդ կուրսերում գրանցվել է 100% առաջադիմություն:
5. 1-ին կուրսում գրանցվել է 85,7% առաջադիմություն:

Ընդհանուր առաջադիմությունը՝ 93,8%

Ի/ԿՄ կրթական ծրագրի Վճարովի ուսուցման համակարգում

- 1) 1-ին կուրսում գրանցվել է 40% առաջադիմություն,
- 2) 2-րդ կուրսում գրանցվել է 41,7% առաջադիմություն,
- 3) 3-րդ կուրսում գրանցվել է 61,5% առաջադիմություն,

Ընդհանուր առաջադիմությունը՝ 46,7%

Անվճար և վճարովի ուսուցման համակարգում ֆակուլտետի բացարձակ առաջադիմությունը կազմում է 66.7%:

Հեռակա ուսուցման համակարգում ունենք հետևյալ պատկերը:

Ի/ԿՄ , բնապահպանություն և բնօգտագործում կրթական ծրագրերից ոչ մի կուրսում 100% առաջադիմություն չի գրանցվել:

- 4) Ի/ԿՄ 2-րդ կուրսում գրանցվել է 27,8% առաջադիմություն,
- 5) Ի/ԿՄ 3-րդ կուրսում գրանցվել է 0,0% առաջադիմություն,
- 6) Ի/ԿՄ 4-րդ կուրսում գրանցվել է 35,0% առաջադիմություն,
- 7) Բ/Բ 3-րդ կուրսում գրանցվել է 50% առաջադիմություն,
- 8) Բ/Բ 4-րդ կուրսում գրանցվել է 25,0% առաջադիմություն

Ի/ԿՄ կրթական ծրագրի ընդհանուր առաջադիմությունը՝ 22,8%

Բնապահպանություն և բնօգտագործում կրթական ծրագրի ընդհանուր առաջադիմությունը՝ 35,3%

Ընդհանուր առաջադիմությունը՝ 27,5%

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ _____ Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ _____ Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ

**ԵՊՀ ԻՄ
ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ.
2020-21ՈՒՍ ՏԱՐԻ**

N	ԱԱՀ	
4.	Մանվել Աշոտի Զաքարյան,	Գիտխորհրդի նախագահ
5.	Քնար Վլադիմիրի Օթարյան	Քարտուղար
6.	Հովակիմյան Աննա Սեդրակի,	Ծ/ԻՏ ամբիոնի վարիչ
7.	Սիմոնյան Գևորգ Սարգսի,	ԸՄ/Բ ամբիոնի վարիչ
8.	Գուլակյան Գեղամ Վոլոդյայի,	Ֆակուլտետի արհմիության նախագահ
9.	Ճաղարյան Մարիետա Ալբերտի	Ծ/ԻՏ ամբիոնի ասիստենտ
10.	Թովմասյան Արտաշես Բարսեղի	Digital wave ընկերության տնօրեն
11.	Սարոյան Կիմ Ֆուրմանովի	«Սիներջի ինթերնեյշնլ սիսթըմզ» ընկերության DB ինժեներ

12.	Խաչատրյան Արև Վահեի	2-րդ կուրսի ավագ
13.	Խաչատրյան Գառնիկի Ժորայի	ՈՒԽ փոխնախագահ
14.	Ստեփանյան Հասմիկ Լևոնի	ԲԳՖ ՈՒԽ նախագահի տեղակալ

Հաստատում եմ

Դեկանի ժ/պ Մ.Ա.Զաքարյան

“Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա”
կրթական ծրագրի վերանայման ժամանակացույց

	Աշխատանքի բովանդակություն	Պատասխանատու անձ/ աշխատանքային խումբ	Ժամկետ	Կատարողականի ցուցիչներ
6.	Հարցման թերթիկի մշակում Google Form ձևաչափով	Հովակիմյան Ա. Ճաղարյան Մ. Ստեփանյան Հ.	10.02.21- 15.02.21	Հարցաթերթիկ Google Form-ի ձևաչափով
7.	Կրթական ծրագրից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցման կազմակերպում	Հովակիմյան Ա. Ստեփանյան Հ.	15.02.21- 15.03.21	Լրացված Google Form-եր
8.	Կրթական ծրագրից դասախոսների բավարարվածության վերաբերյալ հարցման կազմակերպում	Հովակիմյան Ա. Միմոնյան Գ. Ճաղարյան Մ.	15.02.21- 15.03.21	Լրացված Google Form-եր

9.	Կրթական ծրագրի վերջնարդյունքների ձեռքբերման վերլուծություն	Հովակիմյան Ա. Միմոնյան Գ. Ճաղարյան Մ.	01.03.21- 01.04.21	Հաշվետվություն
10.	Հարցման արդյունքների վերլուծություն	Հովակիմյան Ա. Միմոնյան Գ. Զաքարյան Մ. Ճաղարյան Մ. Յուլյան Ռ. Ստեփանյան Հ.	15.03.21- 01.04.21	SWOT վերլուծության արդյունքներ (ըստ ամբիոնական առարկաների)
11.	SWOT վերլուծության արդյունքների քննարկում	Հովակիմյան Ա. Միմոնյան Գ. Զաքարյան Մ. Յուլյան Ռ. Սարոյան Կ. Ճաղարյան Մ.	01.04.21- 15.04.21	Եզրակացություններ
12.	Առաջատար բուհերի (ԵՊՀ, ՀՌՀ, ՄՊՀ) կրթական ծրագրերի բենչմարքինգ:	Հովակիմյան Ա. Միմոնյան Գ. Սարոյան Կ. Ճաղարյան Մ.	01.03.21- 01.04.21	Հաշվետվություն
13.	Առաջարկությունների քննարկում և փոփոխությունների ծրագրի մշակում	Հովակիմյան Ա. Միմոնյան Գ. Յուլյան Ռ. Սարոյան Կ. Ճաղարյան Մ.	15.04.21- 01.05.21	Փոփոխությունների ծրագիր
14.	Կրթական ծրագրի վերջնարդյունքների վերանայում	Հովակիմյան Ա. Միմոնյան Գ. Զաքարյան Մ. Յուլյան Ռ. Սարոյան Կ. Ճաղարյան Մ.	01.05.21- 01.06.21	Կրթական ծրագրի վերջնարդյունքներ
15.	Առարկայական մասնագրերի վերանայում	Հովակիմյան Ա. Միմոնյան Գ. Ճաղարյան Մ.	01.06.21- 15.06.21	Ճշտված մասնագրեր
16.	Կրթական ծրագրում փոփոխությունների իրականացում	Հովակիմյան Ա. Միմոնյան Գ. Ճաղարյան Մ.	15.06.21- 05.07.21	Վերանայված կրթական ծրագիր
17.	2021-2025 ուս. տարիների ԻԿՄ	Հովակիմյան Ա. Միմոնյան Գ.	15.06.21- 05.07.21	2021-2025 ուս. տարիների ԻԿՄ

	կրթական ծրագրի՝ վերջնականացում	Զաքարյան Մ. Ճաղարյան Մ.		կրթական ծրագրի՝ նկարագրություն
--	-----------------------------------	----------------------------	--	-----------------------------------